...իվը

...ւղղված
...ջանում,
...ի թիվը:
...սնակա-
...ել է գո-
...017-ին
...երի թի-
...ժամա-
...ստած,
...ական
...ին զու-
...ն բնա-
...ը. նա-
...ել է 47
...ք սրտի,
...ի նվաք-
...հայտ-
...լ ունենք
...վորա-
...ւթյուն-
...ում նա-
47 դեպ-
2017-ի
...ում ար-
...հայտ-
...Ա. Մար-

...արժա-
...ունեու-
...գործու-
...արզում
...նության
...ի կարգի
...ութուն-
...յան մի-
...յտման

...իսների
...զության
...արկվել
...նծի վե-
...ձասնա-
...ք:
...տախտ-
...ծակը»,-

...ատվա-
...րի հար-
...ն ապօ-
...ին, ան-
...տարվող
...րակոց-
...ւթյուն-

...տիրոս-
...միջոց-
...իպում-
...մակեր-
...իկ գոր-

...ԻՍՅԱՆ

...ին

## ՄԵՐՈՆՔ՝ ԴՐՍՈՒՄ

# Հայկական մշակույթը Չինաստանում բացահայտում է նաեւ վանաձորցի Անի Թադեւոսյանը

Օրեր առաջ Չինաստանի Նանծին քաղաքի մանկավարժական համալսարանում անցկացված միջազգային մշակութային փառատոնին հայ ուսանողները ներկայացրել են Հայաստանը: Փառատոնին մասնակցում էին ավելի քան 30 երկրների ուսանողներ, ովքեր մեծ սիրով ներկայացրել են իրենց մշակույթն ու ավանդույթները:



Չինաստանի բուհերում սովորող հայ ուսանողները՝ Անի Թադևոսյանը, Անի Մարգարյանը, Աննա Աղամյանը, Հայկ Գեղամյանը, Վահան Գեղամյանը և Դավիթ Նահապետյանը, աչքի են ընկել կազմակերպչական ունակություններով և աշխատանքի ընթացքում ցուցաբերած մի շարք կարևոր հատկանիշներով: Նրանք ներկայացել են հայկական ավանդական ձեռագործ հագուստներով՝ Էրզրում-Կարինի և Թիֆլիսի հայկական տարազային համալիրներով, ինչպես նաև ներկայացրել են հայկական տարազի յուրահատկությունները ու հայկական արդուզարդը: Հյուրերը հնարավորություն են



ունեցել տեսնելու հայկական ձեռագործ փոքրիկ գորգ և համտեսելու հայկական ավանդական ուտելիքներ ու լավաշ: Հայ ուսանողները հանդես են եկել «Ուզունդարա» պարով: Հայկական տաղավարներն ու տարազները բավականին հետաքրքրել են փառատոնի մասնակից մյուս երկրներին ու այցելուներին:

Հայ ուսանողները շարունակելու են ակտիվորեն մասնակցել առաջիկայում կազմակերպվելիք այլ մշակութային միջոցառումների:

Ի դեպ, Անի Թադևոսյանը Վանաձորից է: Նա այս տարի ավարտել է Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցը և բարձր միավորներով ընդունվել Շանհայի Ֆուդանի համալսարանի «Չինարեն մշակույթ և լեզու» ֆակուլտետը: Նա իր հաջողությունների համար պարտական է նաև սիրելի ուսուցիչներին, դպրոցի տնօրենին, ովքեր ջանք չեն խնայում աշակերտներին կրթելու, բարձրակարգ գիտելիքներ հաղորդելու համար, ինչն օգնում է նրանց փայլելու ցանկացած ասպարեզում ու ցանկացած երկրում:

Շնորհալի օրիորդը ոչ միայն փայլուն ուսանող է, այլև ջանում է չինացի երիտասարդներին հաղորդակից դարձնել հայկական մշակույթին ու պատմությանը: Նա երազում է աշխարհի լավագույն բուհերից մեկում ստացած գիտելիքները, հմտությունները ու փորձը ծառայեցնել հայրենի երկրի բարգավաճմանն ու զարգացմանը:

**Շնորհավորելով Անիին և մյուս հայ ուսանողներին՝ մաղթում ենք նորանոր ձեռքբերումներ:**

*ԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ*

# «Ձեռք մեկնիր եղբորդ» բարեգործական ծրագրի հանգանակությունը շարունակվում է

1 →

Ծրագրի այս փուլն իրականացնելու և Միքթարյանների համար բնակարան գնելու համար անհրաժեշտ է վանաձորաբնակ մեր հայրենարող աղքատին ու տնանկին և հնարավորությունների սահմաններում օգնության ձեռք մեկնելու այս ընտանիքին՝ ցուտաշունչ ձմռանը կարկա-